



Վ Ճ Ի Ռ

Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ը Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն

ՀՀ Տավուշի մարզի առաջին աստիանի ընդհանուր իրավասության դատարանը
հետևյալ կազմով՝

նախագահությամբ՝ դատավոր
քարտուղարությամբ՝
մասնակցությամբ՝
Հայցվոր՝

Արշակ Շահոյանի
Թերեզա Խաչատրյանի

ՀՀ Տավուշի մարզպետարանի
աշխատակազմ պետական
կառավարչական հիմնարկ
ՀՀ Տավուշի մարզ, ք.Բջնան,
Սահմանադրության 1,
վկայական 01Բ000457, ՀՎՀՀ 07611324

Հայցվորի ներկայացուցիչ՝

Արման Գևորգյան
ք. Բջնան, Բլբուլյան փող., 81շ., 24 բն.
անձնագիր՝ AH0676151,
տրված՝ 06.10.2008թ., 038-կողմից

Պատասխանող՝

Արման Բենիկի Աթաբեկյան
ՀՀ Տավուշի մարզ, գ.Բերդավան 22 փող.,
տուն 3, անձնագիր՝ AC0523752,
տրված՝ 12.12.1998թ., 047-ի կողմից

2012թ. հոկտեմբերի 16-ին Դիլիջան քաղաքում, դռնբաց դատական նիստում,
քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի ՀՀ Տավուշի մարզպետարանի
աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի /այսուհետ հայցվոր/ ընդդեմ
Արման Բենիկի Աթաբեկյանի /այսուհետ պատասխանող/ 164.183 ՀՀ դրամի և 18.09.2011

թվականից մինչև պարտավորության կատարման պահը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների բռնագանձման պահանջի մասին.

Պ Ա Ր Ձ Ե Յ

1. Դատավարական նախապատմություն

2012թ. օգոստոսի 01-ին ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Արման Բենիկի Աթաբեկյանի՝ 164.183 ՀՀ դրամի և 18.09.2011 թվականից մինչև պարտավորության կատարման պահը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների բռնագանձման պահանջի մասին: Միաժամանակ հայցվորը միջնորդել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 71 հոդվածի 3-րդ մասի համաձայն տարածամեկտել պետական տուրքի վճարումը, դատարանը միջնորդությունը բավարարել է՝ պետական տուրքի վճարումը հետաձգվել է դրագանձման հարցը վճռով լուծելու պայմանով:

Հայցվորը միջնորդել է կիրառել հայցի ապահովման միջոց, այն է արգելանք դնել պատասխանողի գույքի և դրամական միջոցների վրա, որը բավարարվել է և 02.08.2012 թվականին տրվել է կատարողական թերթ:

2. Հայցվորի դիրքորոշումը

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի ներկայացուցիչ Արման Գևորգյանը դատաքննությամբ հայտնեց է, որ ՀՀ մաքսային օրենսդրության փոփոխությունների անցումային շրջանում ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծված տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումներին աջակցելու նպատակով՝ ՀՀ Կառավարության 24.02.2011 թվականի ներմուծում՝ ազատ շրջանառության համար,, մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց բյուջետային վարկեր տրամադրելու, Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,, N161-Ն որոշմամբ (այսուհետ Որոշում) հաստատվել է „Ներմուծում՝ ազատ շրջանառության համար,, մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ներմուծող ֆիզիկական անձանց բյուջետային վարկերի տրամադրման կարգը (այսուհետ Կարգ) և օրինակելի պայմանագրի ձևը:

Որոշման համաձայն, Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս „Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմ,, պետական կառավարչական հիմնարկի (վարկատու-գրավատու) և պատասխանող Արման Բենիկի Աթաբեկյանի (վարկատու-գրավատու) միջև 16 մարտի 2011 թվականին կնքվել է „Բյուջետային վարկի տրամադրման և տրանսպորտային միջոցի գրավադրման մասին,, թիվ ՏԱՎ 0249 պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր):

Պայմանագրի համաձայն վարկատու-գրավատուն պարտավորվում է տրամադրել բյուջետային վարկ վարկատու-գրավատուի կողմից ներմուծված՝ պայմանագրով նախատեսված տրանսպորտային միջոցի մաքսագերծման վճարումները կատարելու նպատակով՝ որոշմամբ հաստատված կարգի ընթացակարգերին համապատասխան, իսկ վարկատու-գրավատուն պարտավորվում է վերադարձնել ստացված վարկը և որի ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության օգտին գրավադրում է պայմանագրով նախատեսված՝ VAZ 2108 մակնիշի տրանսպորտային միջոցը (թողարկման տարեթիվը 1991 թվականի, գույնը՝ մոխրագույն):

Պայմանագրի „Վարկի չափը,, բաժնի համաձայն վարկի չափը հավասար է „Ներմուծում՝ ազատ շրջանառության համար,, մաքսային ռեժիմով վարկատուին տրվող մաքսային հայտարարագրով վճարման առաջարկվող մաքսային վճարումների չափին և առկայության դեպքում դրանց հնարավոր ուշացման համար մաքսային մարմնի կողմից հաշվարկվելիք տույժերի, ինչպես նաև „Ժամանակավոր ներմուծում,, մաքսային ռեժիմի խախտման համար մաքսային մարմնի կողմից հնարավոր արձանագրելի տուգանքների գումարին ըստ կարգով նախատեսված փաստացի վճարման:

„Արարատքանկ,, ԲԲ ընկերության „Նորագավիթ,, մասնաճյուղի 18.03.2011 թվականի բազմակի փոխանցման հանձնարարագրի անդորրագրի N4914-ով՝ Կարգի 12-րդ կետի համապատասխան, Բանկը իր մոտ սպասարկվող ՀՀ ֆինանսների նախարարության արտաբյուջետային բանկային հաշվից գանձապետական համապատասխան հաշվեհամարներին կատարել է Արման Աթաբեկյանի օգտին մաքսային վճարումներ (փաստացի)՝ 164.183 (հարյուր վաթսուհինգըստ հազար հարյուր ութսուներեք) ՀՀ դրամի գումարի չափով:

Կարգի 15-րդ կետին համապատասխան, ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից պայմանագրի բնօրինակը և տվյալ պայմանագրի հիմքով վարկի փաստացի վճարումները հավաստող փաստաթուղթը ներկայացվել է ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության

„Ճանապարհային ոստիկանություն,, ծառայության Բջևանի հաշվառման քննական բաժանմունք՝ VAZ 2108 մակնիշի տրանսպորտային միջոցի նկատմամբ Արման Աթաբեկյանի սեփականության իրավունքը գրանցելուց հետո արգելադրում կիրառելու համար:

Պայմանագրի „Հանձնարարկան,, բաժնի համաձայն վարկառու-գրավատուն հանձնարարում է իր բնակության վայրը սպասարկող ՀՀ ոստիկանության „Ճանապարհային ոստիկանության ծառայության,, ստորաբաժանմանը պայմանագրով նախատեսված գրավի առարկա տրանսպորտային միջոցի նկատմամբ իր սեփականության իրավունքը գրանցելուց հետո գրանցման վկայականն ուղղակի տրամադրել վարկառու-գրավատունին:

Կարգի 17-րդ կետին համապատասխան, VAZ 2108 մակնիշի տրանսպորտային միջոցի նկատմամբ Արման Աթաբեկյանի սեփականության իրավունքը գրանցելուց հետո ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության „Ճանապարհային ոստիկանություն,, ծառայության Բջևանի բաժանմունքը առձեռն սեփականության իրավունքի գրանցման 20.05.2011 թվականի թիվ 12AA002746 վկայականը ներկայացրել է ՀՀ Տավուշի մարզպետարան վարկի փաստացի վճարումների չափով տրանսպորտային միջոցի վրա կատարելով արգելադրում:

Պայմանագրի „Վերադարձի ժամկետ,, բաժնի համաձայն, տրամադրված վարկի գումարը Արման Աթաբեկյանի կողմից պետք է վերադարձվեր վարկի փաստացի տրամադրման օրվանից վեց ամսվա ընթացքում, այսինքն՝ մինչև 18 սեպտեմբերի 2011 թվականը: 02.02.2012 թվականի թիվ 07/22/322-12 գրությամբ Արման Աթաբեկյանին ծանուցվել է վերը նշված պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու, վարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում դատական կարգով բռնագանձելու մասին, սակայն նշված ծանուցումը ստանալուց հետո մինչ օրս պատասխանողը չի կատարել ՀՀ պետական բյուջեի նկատմամբ պայմանագրով ստանձնած պարտավորությունները, որի արդյունքում պատասխանողի պարտքը ՀՀ պետական բյուջեի նկատմամբ կազմում է՝ 164.183 (հարյուր վաթսունչորս հազար հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ (ժամկետանց պարտավորության գումարը) և դրա կատմամբ սկսած կետանցի օրվանից՝ 18 սեպտեմբերի 2011 թվականից մինչև պարտավորությունների փաստացի կատարման պահը սահմանված կարգով արգելված տոկոսները:

Վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 27-րդ, 248-րդ, 251-րդ, 345-րդ, 347-րդ, 352-րդ, 368-րդ, 408-րդ, 411-րդ, 877-րդ, 880-րդ, 881-րդ, 887-րդ, հոդվածները, խնդրել է դատարանից պատասխանող Արման Աթաբեկյանից հոգուտ ՀՀ պետական բյուջե բռնագանձել 164.183 (հարյուր վաթսունչորս հազար ութսուներեք) ՀՀ դրամ, բռնագանձումը տարածելով գրավի առարկա հանդիսացող գույքի վրա, իսկ գրավի առարկայի իրացումից ստացված միջոցների անբավարարության դեպքում բռնագանձումը տարածել պատասխանողի գույքի վրա:

Հայցվորը միջնորդել է պատասխանողից բռնագանձել նաև ժամկետանց պարտավորության գումարի նկատմամբ սկսած կետանցի օրվանից 18 սեպտեմբերի 2011 թվականից մինչև պարտավորությունների փաստացի կատարման պահը հաշվարկված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսները:

3. Պատասխանողի դիրքորոշումը.

Պատասխանող Արման Աթաբեկյանը ստացել է հայցադիմումը վարույթ քննարկելու մասին դատավորի որոշումը, հայցադիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև նախազգուշացվել է հայցադիմումին պատասխան ներկայացնելու անհրաժեշտության և պատասխան չներկայացնելու դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածով նախատեսված իրավական հետևանքների մասին, սակայն չի ուղարկել հայցադիմումի պատասխան:

Գործի քննության վայրի և ժամանակի մասին պատշաճ ձևով տեղեկացված պատասխանողը դատական նիստերին չի ներկայացել:

Դատարանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասով, վեճը լուծվել է նրա բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա:

II

1. Գործի փաստերը.

1.1. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի և Արման Աթաբեկյանի միջև 16.03.2011 թվականին կնքվել է բյուջետային վարկի տրամադրման և տրանսպորտային միջոցի գրավադրման մասին պայմանագիր,

հիմք. բյուջետային վարկի տրամադրման և տրանսպորտային միջոցի գրավադրման մասին թիվ SUՎ 0249 պայմանագիրը:

1.2. VAZ 2108 մակնիշի ավտոմեքենայի սեփականատեր է հանդիսանում Արման Բենիկի Աթաբեկյանը, հիմք. տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 12 AA 002746 վկայականը:

1.3. Հայցվորը պատասխանողին հիշեցրել է, որ վերջինիս կողմից վարկի մարում չի կատարվել, հիմք. 02.02.2012 թվականի ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի կողմից պատասխանողին ուղարկված ծանուցումը և կից փոստի հանձման մասին ծանուցագրի պատճեն:

1.4. ՀՀ ներմուծված տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումներին ներկայացված նպատակով, ՀՀ կառավարությունը որոշել է „Ներմուծում՝ ազատ շրջանառության համար,, մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ՀՀ ներմուծող ֆիզիկական անձանց տրամադրել բյուջետային վարկ, հիմք. ՀՀ կառավարության 24.02.2011 թվականի N161-Ն որոշումը:

1.5. 18.09.2011-02.10.2012 թվականը պատասխանողի ստանձնած պարտավորության ժամկետանց գումարի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված տոկոսների գումարը կազմում է 10.523 ՀՀ դրամ, հիմք. Տավուշի մարզպետարանի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի կողմից ներկայացված տեղեկանքը:

2. Կիրառելի իրավունքը (իրավական հիմքերը).

2.1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ, 880-881, 411-րդ հոդվածները:

3. Իրավական խնդիրը.

3.1 Սույն գործով ներկայացված ապացույցներով պատասխանողը, պարտավորություններ ունի արդյո՞ք հայցվորի հանդեպ և հայցվորը կարող է արդյո՞ք հանջել դրանց կատարումը իր հանդեպ և դրա համար հաշվարկել օրենքով սահմանված ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք արդարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ կերպ հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվող տոկոսներ:

4. Վերլուծություն.

Լսելով հայցվորին, ուսումնասիրելով և գնահատելով գործով ներկայացված գրավոր ապացույցները, դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատելով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա, հիմնված ներքին համոզմամբ, գտնում է, որ պահանջը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Գործով ներկայացված ապացույցներով հիմնավորվում է, որ համաձայն ՀՀ Կառավարության 24.02.2011 թվականի N161-Ն որոշման, ՀՀ Կառավարությունը ՀՀ ներմուծված տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումներին աջակցելու նպատակով, որոշել է „Ներմուծում՝ ազատ շրջանառության համար,, մաքսային ռեժիմով մարդատար տրանսպորտային միջոցներ ՀՀ ներմուծող ֆիզիկական անձանց տրամադրել բյուջետային վարկ: Համապատասխանաբար թույլատրել է ՀՀ ֆինանսների նախարարին վերոհիշյալ որոշմամբ հաստատված կարգով բյուջետային վարկերը տրամադրելու նպատակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատան տարածքում բանկային գործառնություններ իրականացնող „Արարատբանկ,, ԲԲ ընկերությունում բացել արտաբյուջետային ցպահանջ բանկային հաշիվ՝ օվերդրաֆտի պայմանով և այդ հաշվին հաշվեգրել նշված որոշման 3-րդ կետով հատկացված գումարը (այն է 300000000 ՀՀ դրամ) և հաշվի սպասարկման մասին պամանագրի շրջանակներում բանկին հրահանգել նախարարության անունից վարկառուների օգտին իրականացնել հաշվից համապատասխան վճարումներ:

Վարկային պայմանագիր կնքելու նպատակով մինչև 25.03.2011 թվականը ներմուծողը պետք է դիմեր մարզպետարան, սահմանված պահանջները և չափանիշները բավարարելու դեպքում Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս մարզպետարանի աշխատակազմի, և վարկառուի միջև ավտոմեքենայի մաքսային վճարների վճարման ֆինանսավորման նպատակով կնքվում է վեց ամսում վերադարձման ժամկետով անտոկոս վարկի տրամադրման և տրանսպորտային միջոցի գրավադրման մասին պայմանագիր:

ՀՀ Կառավարության 24.02.2011 թվականի թիվ 161-Ն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս „Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմ,, պետական կառավարչական հիմնարկի (վարկատու-գրավատու) և պատասխանող Արման Բենիկի Աթաբեկյանի (վարկառու-գրավատու)

միջև 16 մարտի 2011 թվականին կնքվել է „Բյուջետային վարկի տրամադրման և տրանսպորտային միջոցի գրավադրման մասին„ թիվ SU-Վ 0249 պայմանագիրը (այսուհետ Պայմանագիր):

Պայմանագրի համաձայն վարկատու-գրավատուն պարտավորվել է տրամադրել բյուջետային վարկ վարկատու-գրավատուի կողմից ներմուծված տրանսպորտային միջոցի մաքսազերծման վճարումները կատարելու նպատակով, իսկ վարկատու-գրավատուն պարտավորվում է վերադարձնել ստացած վարկը, որի ապահովման նպատակով ՀՀ օգտին գրավադրել է պայմանագրով նախատեսված VAZ 2108 մակնիշի տրանսպորտային միջոցը:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 877-րդ հոդվածի 1-ին մասի փոխառության պայմանագրով մեկ կողմը (փոխատուն) մյուս կողմի (փոխառուի) մեկնականությանն է հանձնում դրամ կամ տեսակային հատկանիշով որոշվող այլ գույք, իսկ փոխառուն պարտավորվում է փոխատուին վերադարձնել մինևույն գումարի դրամ (փոխառության գումարը) կամ փոխատուից ստացված գույքին հավասար քանակի և արժեքի տեսակի ու որակի գույք: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 880-րդ հոդվածի 1-ին մասի՝ փոխատուն պարտավոր է, փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով, փոխատուին վերադարձնել ստացված փոխառության գումարը:

Համաձայն նույն օրենսգրքի 881-րդ հոդվածի 1-ին մասի՝ եթե փոխատուն նախատեսված ժամկետում չի վերադարձնում փոխառության գումարը, ապա փոխառության պայմանագրով նախատեսված տոկոսները դադարում են, իսկ այդ գումարին ենթակա են վճարման միայն սույն օրենսգրքի 411 հոդվածի 1-ին կետով նախատեսված չափով տոկոսներ, սկսած այն օրվանից, երբ գումարը պետք է վերադարձվեր մինչև գումարը փոխատուին վերադարձնելու օրը:

Վերոնշյալ հոդվածների վերլուծությունից հետևում է, որ փոխառուի (պարտապանի) հիմնական պարտավորությունն է փոխատուին (պարտատիրոջը) փոխառությամբ ստացված գումարը վերադարձնելը՝ փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով: Ընդ որում, միայն սույն փաստի առկայության դեպքում փոխառությամբ ստանձնված պարտավորությունը փոխառության պայմանագիրը, լինելով երկկողմանի պայմանագիր, ինպերատիվ ձևով սահմանում է փոխատուի (պարտապանի) հիմնական պարտավորությունը, այն է՝ փոխատուին

(պարտատիրոջը) փոխառությամբ ստացված գումարը վերադարձնելը՝ փոխառության պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով: Ընդ որում, միայն տվյալ փաստի առկայության դեպքում փոխառությամբ ստանձնված պարտավորությունը համարվում է պատշաճ կատարված, իսկ պարտավորությունը՝ դադարած:

Պատասխանող Արման Աթաբեկյանը պատշաճ չի կատարել իր պարտավորությունները, այն է՝ պայմանագրով սահմանված ժամկետում՝ պայմանագրի կնքման պահից 6 ամսվա ընթացքում պարտավոր էր մարել պայմանագրի առարկա հանդիսացող տրանսպորտային միջոցի մաքսագերծման վճարումները կատարելու նպատակով ստացված վարկը և որի ապահովման նպատակով գրավադրել էլ վերոնշյալ պայմանագրով նախատեսված տրանսպորտային միջոցը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի հիմքով տոկոսների բռնագանձման հայցվորի ներկայացրած պահանջը նույնպես ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ: ՀՀ քաղ. օր. 411 հոդվածի 1-ին մասի համաձայն ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվում են տոկոսներ: Տոկոսները հաշվարկվում են կետանցի օրվանից մինչև պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Պայմանագրից հետևում է, որ պատասխանող Արման Աթաբեկյանը վարկը պետք է վերադարձներ վարկի փաստացի տրամադրման օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում, այսինքն, 18.09.2011 թվականի դրությամբ վարկը պետք է մարված լիներ, հետևաբար դատարանը գտնում է, որ Արման Աթաբեկյանի համար առաջացել է պարտավորության չկատարման համար օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն այն է, ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու համար այդ գումարի նկատմամբ հաշվեգրել տոկոսներ վճարելու պարտավորություն: Ուստի դատարանը հիմնավոր է համարում հայցվորի պահանջը, որպեսզի 164.183 ՀՀ դրամ գումարի նկատմամբ հաշվարկել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված բանկային տոկոսները՝ սկսած 18.09.2011 թվականից մինչև

02.10.2012 թվականը, որը համաձայն հայցվորի կողմից ներկայացրած տեղեկանքի կազմում է 20.523 ՀՀ դրամ:

5. Դատական ծախսերը:

Դատարանը քննարկելով դատական ծախսերի հարցը, գտնում է, որ այն պետք զանձվի Արման Աթաբեկյանից հետևյալ հիմնավորմամբ: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, փաստաբանի խելամիտ վարձատրությունից և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի՝ պետակա տուրքը վճարվում է հայցադիմումների համար: „Պետական տուրքի մասին,, ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի „ա,, ենթակետի համաձայն՝ առաջին աստիճանի դատարաններին տրվող գույքային պահանջով հայցադիմումների համար պետական տուրքը զանձվում է հայցազնի երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի 150 տոկոսից:

Հայցվորը ներկայացրել է 164.183 ՀՀ դրամի գումարի բռնագանձման պահանջ, որից պես նաև հաշվեգրված տոկոսները պարտավորության ժամկետանց գումարի վկատմամբ, սկսած կետանցի օրվանից 18.09.2011 թվականից մինչև 02.10.2012 թվականը, որը կազմում է 20.523 ՀՀ դրամ: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջի չափին համամասնորեն, և անկատի ունենալով, որ հայցվորի միջնորդությունը 01.08.2012թ. որոշմամբ բավարվել է պետական տուրքի հարցը վճռով լուծելու պայմանով: Դատարանը գտնում, որ պատասխանող Արման Աթաբեկյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետք է վճարվեն 3.695 ՀՀ դրամ, որպես չվճարված պետական տուրքի գումար, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: :

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ, 131-132-րդ, 134-րդ, 207-րդ հոդվածներով, դատարանը՝

ՎՃՌԵՑ՝

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի հայցը բավարարել՝ Արման Բենիկի Աթաբեկյանից հոգուտ պետական բյուջեի բռնագանձել 164.183(հարյուր վաթսուներորս հազար հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ և 18.09.2011 թվականից 164.183 ՀՀ դրամ գումարին հաշվեգրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, այն է 20.523 (քսան հազար հինգ հարյուր քսաներեք) ՀՀ դրամ գումար, ընդհամենը բռնագանձել 187.706(հարյուր ութսուներոթ հազար յոթ հարյուր վեց) ՀՀ դրամ և այդ գումարի նկատմամբ հայցվորի կողմից ներկայացվող հաշվարկի համաձայն շարունակել տոկոսները գանձումը են մինչև այդ միջոցների գումարը պարտատիրոջը վճարելու օրը:


Արման Աթաբեկյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի բռնագանձել 3.695 (երեք հազար վեց հարյուր ինսունհինգ) ՀՀ դրամ, որպես դատարանի կողմից վճարման պահին հետաձգված պետական տուրքի գումար:

Հայցի ապահովման միջոցները՝ Արման Աթաբեկյանի գույքի և դրաման միջոցների վրա դրված արգելանքները, թողնել անփոփոխ մինչև վճռի փաստացի կատարումը:

Սույն վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում դա կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ԴԱՏԱՎՈՐ



Ա.ՇԱՀՆՅԱՆ

Վճիռը չի բողոքարկվել, մտել է օրինական ուժի մեջ

„_____“ 201 թ.

ԴԱՏԱՎՈՐ

Ա.ՇԱՀՆՅԱՆ

